ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

21.08.2017թ.

Նիստին մասնակցում էին՝ Ա. Զանգեզուրյանը, Ա. Հովեյանը, Ա. Մարուխյանը,
Գ. Դաշտոյանը, Ն. Դովլաթյանը, Ս. Ամիրխանյանը, Վ. Հակոբյանը, Վ. Ավետիսյանը
Նիստը վարող՝ քաղաքապետ Գուրգեն Մարտիրոսյան
Նիստը արձանագրող՝ քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Կարինե Մանուկյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

ՕՐԱԿԱՐԳ

1. Գավառ համայնքի 2017թ. պահուստային ֆոնդից գումար տրամադրելու մասին:
2. Գավառ համայնքի 2017թ. բյուջեում փոփոխություն կատարելու մասին:
3. Քաղաքապետարանի կողմից սոցիալապես անապահով ընտանիքներին դրամական աջակցություն ցուցաբերելու համար չափորոշիչներ սահմանելու մասին:
4. <<Գավառ քաղաքի Բոշնաղյան փողոց թիվ 1 հասցեում գտնվող, Վանիկ Օհանյանին սեփականության իրավունքով պատկանող ավտոտնակի զբաղեցրած և պահպանման ու սպասարկման համար նախատեսված 0.00555հա մակերեսով հողամասը վարձակալության իրավունքով տրամադրելու, պայմանագրի գործողության ժամկետը երկարացնելու և տարեկան վարձավճարի չափը սահմանելու մասին>> Գավառ համայնքի ավագանու 25.04.2007թ. թիվ 3 նիստի թիվ 22 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:
5. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի սեփականություն ճանաչված 150մմ և 500մմ տրամագծերով խողովակները համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերում ներառելու և օտարելու նպատակով գնահատելու մասին:
6. ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքը Եվրոպական միության ,,Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման'' նախաձեռնությանը միանալու տնտեսական ծրագրերի մշակման աշխատանքների կազմակերպման մասին:

Հարց 1

ՈՐՈՇՈՒՄ 34 ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ 2017Թ. ԲՅՈՒՋԵԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. Տ. Բրսիկյան/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Ա. Մարուխյանը, Ս. Ամիրխանյանը

Ղեկավարվելով ,,Իրավական ակտերի մասին'' Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ և 60-րդ, ,,Տեղական ինքնակառավարման մասին'' Հայաստանի Հանրապետության ՀՕ-337 օրենքի 90-րդ հոդվածների պահանջներով, ***Գավառ համայնքի ավագանին որոշում է***

Գավառ համայնքի 2017թ. բյուջեի պահուստային ֆոնդից

1. Լեռնային Ղարաբաղի հանրապետության կառավարության հիմնադրած Արցախի ազգային վիճակախաղի 2017թ. դեկտեմբերի 28-ին կայանալիք 5-րդ խաղարկության 100 /հարյուր/ տոմսեր ձեռք բերելու նպատակով 4861 /այլ ընթացիկ ծախսեր/ տնտեսագիտական հոդվածով տրամադրել 200 000 /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ:

2. Հաշվի առնելով Գավառ քաղաքի բնակիչ Կամո Ավետիսյանի դիմումը առողջական խնդիրների վերաբերյալ, 4729 /այլ նպաստներ բյուջեից/ տնտեսագիտական հոդվածով Կամո Ավետիսյանին տրամադրել 1000000 /մեկ միլիոն/ ՀՀ դրամ դրամական օգնություն բուժման ծախսերը մասնակի հոգալու համար:

3. Գավառ համայնքի ավագանու անդամներին Արցախի Հանրապետության համայնքներում մոտիվացիոն հնադիպումներ կազմակերպելու և Տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքային գործունեությանը ծանոթանալու նպատակով 4729 /այլ նպաստներ/ տնտեսագիտական հոդվածով տրամադրել 400 000 /չորս հարյուր հազար/ ՀՀ դրամ:

   Գումարը վճարել նախաձեռնող խմբի ղեկավար՝ Գավառ համայնքի ավագանու անդամ Գրիգոր Դաշտոյանին:

4. Պահուստային ֆոնդի 4-րդ եռամսյակում պլանավորված 1000000 /մեկ միլիոն/ ՀՀ դրամը տեղափոխել 3-րդ եռամսյակ՝ պահպանելով բյուջեի համամասնությունները:

Կողմ՝ (8) Դեմ ՝(0) Ձեռնապահ՝ (0)

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՇՏՈՅԱՆ

ՆՈՒՆԵ ԴՈՎԼԱԹՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հարց 2

ՈՐՈՇՈՒՄ 35. ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ 2017Թ. ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. Տ. Բրսիկյան/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Ս. Ամիրխանյանը, Ա. Զանգեզուրյանը

Ղեկավարվելով ,,Իրավական ակտերի մասին'' Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ և 60-րդ հոդվածների, ,,Տեղական ինքնակառավարման մասին'' Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5) կետի, 38-րդ հոդվածի 1) կետի պահանջներով, ***Գավառ համայնքի ավագանին որոշում է***

Գավառ համայնքի 2017թ. բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. 05 բաժնի 1 խմբի 1 դասի /աղբահանում/ գործառնական դասակարգման 5121 /տրանսպորտային սարքավորումներ/ տնտեսագիտական հոդվածը պակասեցնել 4 000 000 /չորս միլիոն/ ՀՀ դրամով, իսկ 08 բաժնի 2 խմբի 7 դասի /հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնում և պահպանում/ գործառնական դասակարգման 5113 /շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում/ տնտեսագիտական հոդվածը պակասեցնել 1 156 700 /մեկ միլիոն հարյուր հիսունվեց հազար յոթ հարյուր/ ՀՀ դրամով:

Պակասեցված 5 156 700 /հինգ միլիոն մեկ հարյուր հիսունվեց հազար յոթ հարյուր/ ՀՀ դրամ գումարից՝

1) 2 019 000 /երկու միլիոն տասնինն հազար/ ՀՀ դրամը ավելացնել 05 բաժնի 3 խմբի 1 դասի /շրջակա միջավայրի աղտոտման դեմ պայքար/ գործառնական դասակարգման 5112 և 5134 տնտեսագիտական հոդվածներին, որից 5112 /շենք և շինությունների կառուցում/ տնտեսագիտական հոդվածին՝ 1 939 000 /մեկ միլիոն ինն հարյուր երեսունինն հազար/ ՀՀ դրամ, իսկ 5134 /նախագծահետազոտական ծախսեր/ տնտեսագիտական հոդվածին՝ 80 000 /ութսուն հազար/ՀՀ դրամ՝ Գավառի աղբավայրի տարածքի ցանկապատի կառուցման աշխատանքների և նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռք բերման համար:

2) 3 137 700/ երեք միլիոն մեկ հարյուր երեսունյոթ հազար յոթ հարյուր/ ՀՀ դրամը ավելացնել 04 բաժնի 5 խմբի 1 դասի /ճանապարհային տրանսպորտ/ գործառնական դասակարգման 5112, 5113 և 5134 տնտեսագիտական հոդվածներին, որից 5112 /շենքերի և շինությունների կառուցում/ տնտեսագիտական հոդվածին՝ 1 550 000 /մեկ միլիոն հինգ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ, 5134 /նախագծահետազոտական ծախսեր/ տնտեսագիտական հոդվածին՝ 70 000 /յոթանասուն/ ՀՀ դրամ, իսկ 5113 /շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում/ տնտեսագիտական հոդվածին՝ 1 517 700 /մեկ միլիոն հինգ հարյուր տասնյոթ հազար յոթ հարյուր/ ՀՀ դրամ՝ Գավառի Սովխոզնիկների փողոցի մի հատվածի մայթերի եզրաքարերի կառուցման, ասֆալտապատման աշխատանքների և նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռք բերման համար:

2. 01 բաժնի 1 խմբի 1 դասի /օրենսդիր և գործադիր մարմինների գործառնական դասակարգման 4237 /ներկայացուցչական ծախսեր/ տնտեսագիտական հոդվածը պակասեցնել 350 000 /երեք հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամով, որից

1) 200 000 /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամը ավելացնել նույն դասակարգման 4221 /ներքին գործուղումներ/ տնտեսագիտական հոդվածին:

2) 150 000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամը ավելացնել 01 բաժնի 6 խմբի 1 դասի /ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ/ գործառնական դասակարգման 4241 /այլ մասնագիտական ծառայություններ/ տնտեսագիտական հոդվածին:

Կողմ՝ (8) Դեմ ՝(0) Ձեռնապահ՝ (0)

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՇՏՈՅԱՆ

ՆՈՒՆԵ ԴՈՎԼԱԹՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հարց 3

ՈՐՈՇՈՒՄ 36. ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. Կ. Մանուկյան/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Ն. Դովլաթյանը,Ա. Մարուխյանը

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 10 կետով, ***Գավառ համայնքի ավագանին որոշում է***

Սահմանել սոցիալական աջակցության հետևյալ չափորոշիչները

1. Քաղաքապետարանի կողմից քաղաքացիներին տրամադրվող դրամական աջակցության չափը սահմանել 20000- ական ՀՀ դրամ
2. Հրատապ բուժման կարիք ունեցող քաղաքացիներին տրամադրվող դրամական աջակցության չափը սահմանել 40 000-80000 ՀՀ դրամ:
3. Ուսանողներին տրամադրվող դրամական աջակցության չափը /ուսման վարձի տեսքով/ սահմանել ուսումնական հաստատության կողմից ներկայացված հաշիվ ապրանքագրի գումարի մինչև 50-տոկոսի չափով.
4. Հայրենական մեծ պատերազմի վետերաններին, Արցախյան հերոսամարտի մասնակիցերին և զոհված զինծառայողների ընտանիքների անդամներին տրամադրվող դրամական աջակցության չափը սահմանել 15000 ական ՀՀ դրամ.

   Ելնելով անհրաժեշտությունից, այլ դեպքերում տրամադրվող դրամական աջակցության չափը քննարկում և հաստատում է համայնքի ավագանին:

Կողմ՝ (8) Դեմ՝(0) Ձեռնապահ՝ (0)

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՇՏՈՅԱՆ

ՆՈՒՆԵ ԴՈՎԼԱԹՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հարց 4

ՈՐՈՇՈՒՄ 37. <<ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ ԲՈՇՆԱՂՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ 0.00555ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼԱԿՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՏԱՐԵԿԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 25.04.2007Թ. ԹԻՎ 3 ՆԻՍՏԻ ԹԻՎ 22 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/զեկ. Ա. Գևորգյան/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Ա. Հովեյանը,Վ. Հակոբյանը

Ղեկավարվելով ,,Իրավական ակտերի մասին'' Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ, 60-րդ հոդվածների, 71-րդ հոդվածի 1-ին մասի 1) կետի, 72-րդ հոդվածի 1-ին մասի 1) կետի ա) ենթակետի, ,,Տեղական ինքնակառավարման մասին'' ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 10-ին մասի դրույթներով, ***Գավառ համայնքի ավագանին որոշում է***

1. Նկատի ունենալով, որ դադարել է <<Գավառ քաղաքի Բոշնաղյան փողոց թիվ 1 հասցեում գտնվող, Վանիկ Օհանյանին սեփականության իրավունքով պատկանող ավտոտնակի զբաղեցրած և պահպանման ու սպասարկման համար նախատեսված 0.00555հա մակերեսով հողամասը վարձակալության իրավունքով տրամադրելու պայմանագրի գործողության ժամկետը երկարացնելու և տարեկան վարձավճարի չափը սահմանելու մասին>> Գավառ համայնքի ավագանու 25.04.2007թ. թիվ 3 նիստի թիվ 22 որոշմամբ կարգավորվող իրավահարաբերությունների հետագա իրավական կարգավորման անհրաժեշտությունը, Գավառ համայնքի ավագանու 25.04.2017թ. թիվ 3 նիստի թիվ 22 որոշումը ճանաչել ուժը կորցրած:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրը:

Կողմ՝ (8) Դեմ՝(0) Ձեռնապահ՝ (0)

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՇՏՈՅԱՆ

ՆՈՒՆԵ ԴՈՎԼԱԹՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հարց 5

ՈՐՈՇՈՒՄ 38. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉՎԱԾ 150ՄՄ ԵՎ 500ՄՄ ՏՐԱՄԱԳԾԵՐՈՎ ԽՈՂՈՎԱԿՆԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. Ա. Գևորգյան/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Ս. Ամիրխանյան, Վ. Ավետիսյան

Ղեկավարվելով ,,Իրավական ակտերի մասին'' Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ, 60-րդ հոդվածների, ,,Տեղական ինքնակառավարման մասին'' Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 21), 32) և 42-րդ հոդվածի 10) կետերի դրույթներով, ***Գավառ համայնքի ավագանին որոշում է***

1. Դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով Գավառ համայնքի սեփականություն ճանաչված 256,24 գծամետր երկարությամբ d=150մմ տրամագծով և 1175.69 գծամետր երկարությամբ d=500մմ տրամագծով խողովակները ներառել համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերի ցանկում:
2. Խողովակների օտարելու գործընթացի իրավական կարգավորման նպատակով դիմել համապատասխան գնահատում իրականացնող անկախ կազմակերպության՝ սույն որոշման 1-ին մասում նշված խողովակները գնահատելու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրը:

Կողմ՝ (8) Դեմ ՝(0) Ձեռնապահ՝ (0)

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՇՏՈՅԱՆ

ՆՈՒՆԵ ԴՈՎԼԱԹՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հարց 6

ՈՐՈՇՈՒՄ 39. ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ,,ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐ ՀԱՆՈՒՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ'' ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆԸ ՄԻԱՆԱԼՈՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Իրավական ակտերի մասին'' Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի, ,,Տեղական ինքնակառավարման մասին'' ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 10. կետի դրույթներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկություն-հիմնավորումը, Գավառ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Համաձայնություն տալ միանալու Եվրոպական միության ,,Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման'' ծրագրին և առաջարկել համայնքի ղեկավարին ստորագրելու համապատասխան փաստաթղթերը:
2. Կազմակերպել և կազմել տնտեսական ծրագրեր՝ պատշաճ կառավարման, պետության – մասնավոր հատված երկխոսության սկզբունքներին համապատասխան:

Կողմ՝ (8) Դեմ ՝(0) Ձեռնապահ՝ (0)

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՇՏՈՅԱՆ

ՆՈՒՆԵ ԴՈՎԼԱԹՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳՈՒՐԳԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ